



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2007թ.

N163

ք.Ստեփանակերտ

### ԹԱՓՈՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Սահմանել թափոնների պետական հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՂՀ վարչապետ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

## Կ Ա Ր Գ

### ԹԱՓՈՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են թափոնների պետական հաշվառման հետ կապված հարաբերությունները:
2. Թափոնների պետական հաշվառման հիմնական նպատակը թափոնների գոյացման ծավալների վերաբերյալ տեղեկատվական բանկի ստեղծումն է, որն անհրաժեշտ է թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման համար:
3. Պետական հաշվառման ենթակա են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում առաջացող արտադրության և սպառման թափոնների ծավալները:
4. Թափոնների պետական հաշվառումն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ սույն կարգի համաձայն:
5. Թափոնների պետական հաշվառումն իրականացվում է վտանգավոր թափոններ առաջացնող և թափոնների (արտադրության և սպառման) տեղադրում իրականացնող իրավաբանական անձանց (ներառյալ՝ օտարերկրյա և անհատ ձեռնարկատերերի) կողմից ներկայացված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված՝ «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» N 1 ձևի - թափոն տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունների (այսուհետ՝ վարչական վիճակագրական հաշվետվություններ) տվյալների հիման վրա:
6. Վարչական վիճակագրական հաշվետվությունները կազմվում են դրանց հաստատված ձևին և լրացման հրահանգին համապատասխան և ներկայացվում լիազոր մարմին:
7. Վարչական վիճակագրական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 25-ը:

ԼՂՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ